Զ. ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 25 ՀՈՒՏԵՄԲԵՐ 1903 — Թիւ 563

ԳԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան 12 Ֆր
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »

Ամերիկայի համար
Տարեկան 3 տլր.
Վեցամսեայ 1.50 »

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ է։ Երեքին տեղի անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ։

Վաճառքի համար մի օրինակ 10 սանթիմ

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀԷ ՅԱՐԱԿԱՅԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Նամակներ՝ ... ղրկել խմբագրատան հասցէին։

ВѢСТНИКЪ „ЖУМЪ“
Варна

Redaction du „Charj
Varna (B

Արտասահմանի համար
Մէկ օրինակ
)(20 ՍԱՆԹԻՄ)(
Պուլկարիոյ համար
Մէկ օրինակ
)(15 ՍԱՆԹԻՄ)(

Գրուրիւնք չեն տրուիր

R. P. Kalemcarian, (Autriche) Mechitharistengasse W. 4. Vienne

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՄՆԸ ԲԱԺՆԵՊԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ՀԵՌԱԳԻՐ

Պարսկաստանում ստացած մի նամակից մեզ հեռագրում են հետեւեալ կտորը.

«Դաշնակցութեան» զինակիր խմբերը, հետեւակ և ձիաւոր, մօտ հարիւր հոգի, մի քանի մասերի բաժնուած, սեպտեմբերի 17ին (հ. տ.) յանկարծ թեամբ անցան ռուս-տաճկական սահմանը։ Հետեւեալ օրը, ճանապարհին, սահմանից 6-8 վերստ հեռու, խմբերից երկուսը նկատուում են հովիներից և շուտով շրջապատուում են զօրքերով, թուրք խուժանով և քուրդ աշիրէթներով։ Սկսուում է սոսկալի կռիւ, որը ահա երրորդ օրն է դեռ շարունակուում է։ Կանչուած են զօրքեր Կարինից, Դալի-Բաբայից և Ղարաքիլիսայից։ Բերուած են նաեւ թնդանոթներ։ Մեր ընկերները կռուում են քաջաբար։ Թշնամուց ընկել են հարիւրաւոր մարդիկ, որոնց թուում մի հազարապետ, մի դայմագամ, երեք սպայ, ն դարապաշի (դարաբէյ) և սահմանագլխի յայտնի Ռաշիտ բաշայի մեծ որդին։ Խլել են զօրքերից բազմաթիւ հրացաններ և ձիաներ։ Դժբաղդաբար՝ անհաւասար կռուում մաս-մաս եղած խմբերը իրենք եւս տուել են բազմաթիւ նահատակներ և գտնուում են ամէնակրիտիքական դրութեան մէջ։ Նոր խմբեր գընացին օգնութեան։ Մանրամասնութիւնները նամակով։

«Դրոշակ»

ՊՈՒԼԿԱՐԱՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԸ

Սոֆիայէն մեզ կը հեռագրեն, որ գումարուած Պատգամաւորական ժողովը ընտրած է Ներսէս Եպիսկոպոս Ասլանեանը Պուլկարահայոց Առաջնորդ։

ՀԱՅՐԻԿԸ

Ան կանգնած է անկուն, կրանիտէ ժայռի մը նման հզօր ու ցուրտ՝ նուիրաբեր Մայր Տաճարին առաջ ու կ'արդիլէ պաշտօնական աւազակներուն քայլերը դէպի Սրբութիւն Սրբոցը։

Տասնեւվեց դարեր իրենց պատանքներէն իրեն կը նային ու Սեպուհ լերան Մանեայ այրին մէջ Լուսաւորչի ոսկորները անհունօրէն կը փոթորկին...

Եւ Հայրիկը իր չքանչանները Դող բռնակալին երեսին նետած՝ շղթայուած առիւծի մը պէս ցաւած նայուածքը կը սեւեռէ հեռաւոր դիւղերէն հաւած անթուրաց ամբոխին, կուլայ իր անզօրութեան մէջ, բայց օրհնելով անոնց կերդնու մինչեւ կառափնատ անդրդուելի մնալ։

Հաւատացիւ է, որ մարդկային կեանք մը այսքան հանդիսաւոր վայրկեան մը ունենած ըլլայ իր բովանդակ շրջանին մէջ։ Մանաւանդ հաւատացիւ է Հայրիկի կեանքին նման կեանք մը, որ իր առաւօտէն սկսած մինչեւ իրիկունը արդէն քանի մը վսեմ վայրկեաններ ունեցաւ։ Ահա այսօր ալ, երբ իր կեանքին գիշերը հասնելու վրայ է, իր մօտաւոր ու հեռաւոր զաւակներուն հետ ամբողջ քաղաքակիրթ աշխարհը հանդիսատես է հերոսական գահավիժումի մը դէպի անէութիւնը։

Երջանիկ է Ան, որովհետեւ հերոսներուն դիւցազնական օրորովը պառկելու կը պատրաստուի։

Մեզ կը մնայ, որ քաջալերենք մեր տրտում Հօրը, միայն իր դիակի վերայով պաշտօնական աւազակներուն պղծել թողնելու մեր ապագայի դարեւոր յիշատակարաններուն Տունը։ անշուշտ նախ քան իր դիակի վրայէն անցնիլը՝ մեր դիակներու բլուրները կոզակներու նժոյգներուն տակ փռելու աննենգ երդումը կնքած։

Իրեն հետ էինք երեկ, իրեն հետ ենք այսօր, ու իրեն հետ պիտի ըլլանք վաղը՝ մահի դեղագոյն վայրկեանին։

ԿԱՎԿԱՍԵԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

ԲԱԳՈՒ

Այստեղ ցոյցը կազմակերպել է ամբոխը, ինքնաբերաբար։ Սեպտեմբերի 2ին, առաւօտեան ժամը 10ին, լուր տարածուեց, թէ Հոյն օրն է լինելու գոյքերի գրաւումը, անսպասելի էր։ Ոչ ոք չէր կարծում թէ այդքան շուտ պիտի կատարուէր, քանի որ էջմիածնից նամակ կար, թէ ամսի երկուսին այնտեղն էր լինելու դրաւումը եւ ապա, հետզհետէ ուրիշ տեղերում։

Լուրը տարածուեց ապշեցուցիչ արագութեամբ։ Ժամը 5ին բալախանցիների մի ստուար խումբ, որոնց մէջ շատերը զինուած էին, ինքնաբերաբար թափուեց քաղաք ու լցրեց եկեղեցու գաւիթը եւ չրջակայ փողոցները։ Երեւացին կօզակներ ու ռուսական ներ։ Նրանք հրաւիրեցին ամբոխին ցրուել։ Ատրճանակներով ու քարերով ամբոխը յետ մղեց ոստիկաններէն։ Վերջիններս էլի երկու անգամ յարձակում գործեցին, բայց եւ ամէն անգամ յետ մղուեցին։ Այնուհետեւ եկաւ հետեւակ զօրքը։ Նա երկիւղով էր մօտենում եկեղեցուն, կարծելով որ այնտեղ տինամիտ կայ պահուած։ Վերջապէս եկեղեցին պաշարուում է։

Սկսուում է երկու կողմից հրացանաձգութիւն, որը տեւում է մի քանի ժամ։ Գիշերուայ ժամը 11ին մօտ՝ եկեղեցին դեռ լի է ժողովրդով, իսկ դուրսը կանգնած է զօրքը։ Խորհրդաւոր ու մելամաղձիկ զողանջում է եկեղեցու զանգը, որ օգնութեան է կանչում պաշարուածներին։

Կէս գիշերից յետոյ, երբ ուժը արդէն հաստատուում է իր իրաւունքը եւ փողոցները դատարկուում են ամբոխից, սուլիները սկսում են մօտենալ եկեղեցուն, աւելի նեղացնել շրջանը։ Պաշարուածների փամփուշտները ըսպառուում են։ Նրանց մի մասը՝ պատուհաններից մի կերպ դուրս գալով, ազատուում է։ Մնացածներին—մօտ 100 հոգի—թոկերով կապոտում էն իրար ձեռքերից եւ զինուորների մի ստուար խմբի հսկողութեան տակ ուղարկում են բանտ։ Եկեղեցու գաւիթը այդպիսով մաքրուում է եւ զօրքը բռնում է պաշարուածների տեղը։ Սկսում են խուզարկել եկեղեցին...

Այդ արիւնալեղ ընդհարման միջոցին հայերից սպանուում են 11 եւ վիրաւորուում 45 հոգի։

Ահա Բագուում նահատակուած եւ ծանր վիրաւորուածների անմոռանալի անունները.

Սարգիս Աֆրիկեանց
Գրիգոր Ստեփանեանց
Պետրոս Սաֆեանց
Մրչակ Դաքեղեանց
Նիկողայոս Գրիգորեանց
Յարութիւն Յակոբեանց
Հայրապետ Սարգիսեանց
Մարտիրոս Գրիգորեանց (Շուշեցի
Մարտիրոս Գրիգորեանց (կօնդուկտոր)

Երկուսի անունները անյայտ են դեռ։

Ծանր վիրաւորուածները, որոնց առողջանալուն յոյս չկայ.

Յովհան Սարգիսեան
Խոսրով Յարութիւնեան
Աղեքսանդր Գարեանց
Աղեքսանդր Հայրապետեանց

Թեթեւ վիրաւորուածների թիւն է 40։ Թշնամու կողմից նոյնպէս կան շատ սպանուած եւ վիրաւորուածներ։

Հետեւեալ օրերը—սեպտեմբեր 3ին, 4ին, 5ին—եկեղեցու առջեւ խռնուած են զինուորները։ Նրանց հրացանները բուրգեր են կազմում դարբասի ներսը, պատերի երկարութեամբ։ Պարապետը բանակի տեսք ունի։ այնտեղ վրաններ են ձգուած, կերակուր են պատրաստում։ Երեւում է եւ մի թնդանօթ։ Երթեւեկութիւնը այդ փողոցով դադրած է։ Բռնում են ամէն մի անցորդի, խուզարկում են եւ եթէ մի դրչահատ էլ գտնեն գըրպանում, ծեծում, բանտարկում են։

Զինուորական դրութիւն է Բագուում...

ԿԱՐՍ

Կառավարութիւնը այստեղ էլ ցոյց տուեց, որ ոչ մի միջոց չպիտի խնայէ՝ ճնշելու ամէն մի արդարացի բողոք հայ ժողովրդի կողմից եւ որ միշտ պատրաստ է սրի ու հրացանի առնել այդ ժողովրդին։ Նա համոզուած էր, որ Դանձակի կոտորածներից յետոյ ոչ մի հայ այլեւս չպիտի համարձակէր ոչ միայն դուրս գալ հրապարակով բողոքելու բռնակալութեան դէմ, այլ նոյն իսկ կը վախնար մտածել դրա մասին։ Այդ պատճառով էլ Ներսէս Գալիցինը, որ խստիւ պատուիրել էր Երեւանի եւ Ալէքսանդրոպոլի ցոյցերի մասին ոչ

մի լուր չտպել լրագիրներում, յանկարծ հրամայում է Գանձակի կոտորածի մասին շուտափոյթ տեղեկութիւն տալ պաշտօնական «Կավկազ» լրագրում, որպէսզի սարսափեցնէ հայ ժողովրդին։ Բայց ի զո՜ւր…

Օգոստոսի 24ի խաղաղ ցոյցից յետոյ, Կարսի հայ ժողովուրդը սեպտեմբերի 2ին արդէն ապացուցեց, որ նա չէ վախենում նոյնիսկ կոզակների եւ սալդաթների սրերից ու գնդակներից, եւ համարձակ կերպով արտայայտեց իր արդարացի բողոքը ռուս կառավարութեան աւազակային յափշտակութեան դէմ։

Այդ օրը, վաղ առաւօտեան, քաղաքի մէջ տիրում էր խորհրդաւոր լռութիւն։ Ժամի 10ին կառավարչական յանձնաժողովը՝ շրջապատուած բազմաթիւ ստրաժնիկներով, ներկայանում է վարդապետին, պահանջում է նրանից կալուածների եւ գոյքերի ցուցակներն ու դօկումենտները։ Վարդապետը կտրուկ կերպով մերժում է։ Եւ ահա սկսւում է զանգահարութիւն. հայերը թողնում են գործերը, փակում են խանութները եւ շտապում հոգեւոր կառավարութեան շուրջը։ Այդտեղից ժողովուրդը աղաղակով վազում է դէպի եկեղեցիները: Փողոցներում բազմութիւնը աւելի ու աւելի մեծանում է եւ հասնում մօտ 4-5 հազար հոգու. Այդ յանկարծական, բայց ուժգին բողոքը շփոթեցնում է տեղական ամբողջ վարչութիւնը։ Նա իսկոյն քաղաք է թափում երկու գունդ կոզակներ եւ ահագին թւով ստրաժնիկներ։ Երբ յանձնաժողովը շարժւում է դէպի հայոց եկեղեցին, ամբոխը քարէ կարկուտ է թափում։ Ստրաժնիկներն ու կոզակները նահանգապետի հրամանով երկու անգամ պարպում են հրացանները։ Ժողովուրդը պատասխանում է ռեւոլվերներով ու քարերով։ Այդ անհաւասար կռւի ընթացքում հայերից զոհ են գնում 4 հոգի, շատերն էլ վիրաւորւում են։ Իսկ բռնակալութեան կողմ գործակալներից՝ մի քանի ստրաժնիկներ ծանր վէրքեր են ստացել, նահանգապետը եւ մի քանի չինովնիկներ՝ քարի հարուածներ։ Ժողովուրդը իր պարտքը կատարելով կամաց-կամաց սկսում է ցրւել։ Սակայն ոստիկանութիւնը դրանից յետոյ էլ շարունակում է հալածել անզէն ու անպաշտպան մարդկանց եւ բանտը լցնում է 85 ձերբակալուածներով։

ԷՋՄԻԱԾԻՆ

——

Սեպտեմբերի 5ին Երեւանից Էջմիածին եկաւ կառավարչական յանձնաժողովը՝ բաղկացած հետեւեալ անձերից.— Երեւանի փոխ-նահանգապետը, մի հայատեաց վրացի, որ հայակերութեան բազմաթիւ ապացոյցներ է տւել. նահանգապետի դիւանատան կառավարիչը, նահանգական ատեանում ծառայող մի հայ— Լեւոն Ջալալեան, Վաղարշապատի գաւառապետը եւ Սինօդի պրոկուրոր Կանչելին, Աւետյանց, որ Երեւանի փոխ-նահանգապետը սեպտեմբերի 4ին վերադարձաւ Թիֆլիսից, ուր գնացել էր հրահանգ ստանալու այս բոլոր եղեռնագործութիւնների հեղինակ Գոլիցինից. Սեպտեմբերի 5ին, առաւօտեան ժամը 11ին, Յանձնաժողովը ներկայացաւ կաթողիկոսին եւ խնդրեց յանձնել եկեղեցական կալուածները համաձայն բարձրագոյն հրամանին։

Կաթողիկոսը մերժեց յանձնել ոեւէ բան, մօտաւորապէս հետեւեալ խօսքերով. «Ես երդւել եմ ռուսաց կայսեր՝ հաւատարիմ լինել Նրա հրամաններին եւ պատրաստ եմ ամէն բոպէ Նրա հրամանը կատարել. եթէ պէտք լինի, ես պատրաստ եմ խաչը ձեռքս առնել եւ իմ ժողովրդին առաջնորդել կայսեր թշնամիների դէմ՝ կռւով ու արիւնով ապացուցանելու մեր ամենախոնարհ հպատակութիւնը. բայց միեւնոյն ժամանակ երդւել եմ տւել նաեւ իմ ազգին. Թւով 4 միլիոն հայ. երդւել եմ հաւատարիմ լինել Նրա եւ Նրա դարեւոր իրաւունքների պաշտպանը հանդիսանալ. Հայ ազգը միլիոնաւոր ստորագրութիւններով, դիմել է ինձ, խնդրում է միջնորդել կայսեր եւ Նրա ողորմածութիւնն ստանալ։ Ես արդէն դիմել եմ, բողոքել եւ սպասում եմ կայսեր շնորհին»։

Յանձնաժողովի այն դիտումին, թէ «մենք կայսեր ծառաներն ենք. պարտաւոր ենք անյապաղ կատարել Նրա հրամանը, թելադրեցէք ձեր ստորադրեալներին դիւրութիւն տալ մեզ ի կատար ածելու բարձրագոյն հրամանը», Հայրիկը պատասխանել է «Ձեմ կարող ոչինչ անել. Ինչ էք ուզում ինձանից. մի հոգի ունեմ, կուզէք առէք. Մնացածը բոլոր ժողովրդինն է. Ես ոչինչ չեմ տայ եւ ոչ էլ թղթերը կստորագրեմ. Դուք պրոկուրոր ունիք, դիմեցէք նրան»։ Տասը բոպէ այդպէս խօսելուց եւ կաթողիկոսից բացասական պատասխան ստանալուց յետոյ, Յանձնաժողովը հեռացել է վեհարանից առանց ոչինչ անելու։ Այդ օրը ես ներկայ էի Վաղարշապատում. Ամբողջ գիւղը կարծես ամայացած լինէր. սգի օր էր։ Բոլոր խանութները, արհեստանոցները եւ գլխաւոր փողոցի վրայ գտնուած տները փակուած էին։ Փողոցներում մի հատիկ հայ չէր երեւում. Բոլորը քաշւել էին տները. Փողոցում թագաւորողը կառավարութեան պաշտօնեաներն էին պաշտօնական-տօնական համազգեստներով—զօրքեր, օֆիցերներ, ոստիկանութիւն—գազանների մի խառնիճաղանճ վոհմակ, որոնք սարսռւ դէս ու դէն էին չափչփում։

Այժմ Էջմիածնում կայ 800-900 հետեւակ զինւորներ, 200 կոզակներ, 80ի չափ բատարէա-թնդանօթներ, ահագին քանակութեամբ ստրաժնիկներ եւ ոստիկանների արտաքոյ կարգի քանակութիւն. Վանքը շրջապատել են չորս կողմից զինւորներով, իսկ կոզակներն ու ստրաժնիկները շրջագայում են գիւղի փողոցները եւ ճանապարհները՝ դէպի գիւղեր եւ դէպի Երեւան։

Էջմիածնում անյաջողութեան հանդիպելով ուղեւորւել են Օշական 105 զինւորներով, 200 կոզակներով եւ 70 ստրաժնիկներով. Զինւորներին մէկ օր առաջ ուղարկել են Աշտարակ, կոզակներին՝ Օշական, իսկ ստրաժնիկներին պահել են իրենց հետ. Օշականում, յանձնաժողովի նախագահ Վից դիմում է հայ ժողովրդին եւ բաւական մեղմ լեզւով առաջարկում է ստորագրել. ժողովուրդը մերժում է. Առարկութիւնը ամէն տեղ միեւնոյնն է— մենք չենք կարող առանց կաթողիկոսի հրահանգի՝ ոեւէ մասնակցութիւն ունենալ. Վերջը վրդովւած՝ դիմում է Օշականի երեսփոխին արդէն պահանջով. բայց նրանից էլ մերժում է ստանում. Գաւառապետը սպառնում է մինչեւ իսկ մի երկու ապտակ է տալիս— դարձեալ նոյն պատասխանը. Ծերերը կապած՝ երեսփոխին բանտարկում են եւ իրենք գնում Աշտարակ. Այնտեղ Յանձնաժողովը դիմում է գիւղական տանուտէրին. Սա եւս մերժում է ու գաւառապետը սրան էլ ծեծել է տալիս եւ պահանջում է ստորագրել. բայց տանուտէրը փոխանակ ստորագրելու վզից կախ արած տանուտէրական նշանը հանում է եւ հրաժարւում. Անցնում են Եղւարդ գիւղը, որտեղից եկած լուրը վկայում է, որ ժողովուրդը ոչ մի մասնակցութիւն չէ ունեցել. ստորագրել է միայնակ գիւղական տանուտէրը. Մաստարայ գիւղի մասին առայժմ ոչ ինչ յայտնի չէ. Վերոյիշեալ գիւղերից կրկին վերադառնալով Էջմիածին. Յանձնաժողովը դիմում է կաթողիկոսին, խնդրելով Էջմիածնի գանձարանի բանալին. Ինչպէս արդէն նախօրօք որոշւած էր, բանալին կաթողիկոսի մօտն է լինում, որը եւ կտրական կերպով մերժում է յանձնել. Յանձնաժողովը կնքում է գանձարանը եւ վերադառնում է Երեւան. Այսօր երկրորդ օրն է, ինչ Երեւանումն են, բայց դեռ ոչինչ բանի չեն ձեռնարկել.

Յափշտակող Յանձնաժողովը Էջմիածնում մի արձանագրութիւն էր կազմել եւ տեղացի ստոր հայերից մի քանիսին ստորագրել տւել.

ԵՐԵՒԱՆ

——

Նախորդ նամակովս յայտնել էի, որ համաձայն մի գաղտնի հեռագրի, հայոց եկեղեցական կալուածները խլելու օրը որոշւած էր սեպտեմբեր 2-ը. բայց եկաւ սեպտեմբեր 2-ը և ոչ մի բան տեղի չունեցաւ մեզ անյայտ պատճառով, թէեւ դրա համար ակներեւ պատրաստութիւններ էին տեսնում. դիմել էին Երեւանի հայոց թեմակալի փոխանորդ Պարզեանին, որ պատրաստուի յանձնելու, տպագրել էին տւել յատուկ բլանկներ, հրաւիրագրեր, մարդիկ էին նշանակել եւայլն.

Սեպտեմբերի 5-ին երեկոյեան, Երեւանի մասնաճիւղը մի շրջաբերականով դիմեց քաղաքի բոլոր խանութպաններին, պահանջելով հետեւեալ օրը, սեպտեմբերի 6-ին, փակել բոլոր խանութները, իբրեւ սգի նշան, և չերեւալ փողոցներում.

Թէեւ Երեւանում դեռ չէին սկսել գրաւել կալուածները, բայց համաձայն Մասնաճիւղի վերոյիշեալ շրջաբերականին՝ սեպտեմբերի 6 ին Երեւանի շուկայում բոլոր հայերի խանութներն ու արհեստանոցները փակուած էին. Գլխաւոր փողոցներում, ռուսաց նոր շինած եկեղեցու շուրջը, ոստիկանատան դիմաց և մի քանի աչքի ընկնող կէտերում սեպտեմբերի 5-ի գիշերը պարզւած էին սեւ ու ճերմակ դրօշակներ. վերջիններից մի քանիսը զանազան մակագրութեամբ.—«Կորչի՛ միապետութիւնը», «Կեցցէ՛ ազատութիւնը», «Կեցցե՛ն հայերի դարեւոր իրաւունքները», եւայլն.

Սեպտ. 6 ին առաւօտեան մինչեւ 10-ը դեռ ծածանւում էին սեւ դրօշակները, որոնք հաւաքւեցին ոստիկանութեան կարգադրութեամբ և տարեւյան ռուսաց կայսերական հիմքերը պահպանող ժանդարմերիայի գլխաւոր գրասենեակը. Նահանգապետի հրամանով կանչեցին բազմաթիւ հայ խանութպաններ և ոստիկանների հսկողութեան տակ ամբողջ օրը կարողացան բաց անել տալ միայն երեք խանութ. Այսպէս անցաւ այդ օրը. Հետեւեալ օրը, սեպտ. 7-ին, դարձեալ փակ էին խանութները.

Թէ ի՞նչ կը լինի կալուածները խլելու ժամանակ՝ դժւար է գուշակել. Թէեւ Մասնաճիւղի որոշումն է խաղաղ ցոյց անել, բայց ո՞վ կարող է նախատեսել զրգռւած ամբոխի անելիքները: Տրամադրութիւնը խիստ յուզւած է.

Երեւանի նահանգապետը մի շրջաբերական է հրատարակել, որի մօտաւոր բովանդակութիւնը այս է.— «Բարձրագոյն հրամանի մասին— որ նպատակ ունի կալուածները գրաւել լոկ շահագործելու դիտաւորութեամբ — չարամիտ(*) մարդիկ սուտ լուրեր են տարածել, իբր թէ դրանով կրօնըն է խլւում, եկեղեցին է խլւում, ազգութիւնն է ոչնչացւում. Կառավարութիւնը միայն բարիք(*) է ուզում անել հայոց ազգին.»

Եւ այլ այսպիսի յիմար բաներ, որ յիշեցնում են տաճկական հերքումները.

Ներքին գործոց մինիստրութեան վերջին գրութիւնից յետոյ, կաթողիկոսը նորից հեռագրով դիմել էր Գալիցին արքային և խնդրել էր միջնորդել՝ կայսեր հետ տեսնելու. Գալիցինը պատասխանել է. «Մինչեւ կալուածները չը յանձնէք, անհնարին է միջնորդութիւնը»։ Կաթողիկոսը պատրաստել է տալ մի ընդարձակ զեկուցագիր կայսեր մատուցանելու։ Այդ զեկուցագիրը թարգմանւում է թէ գրաբար և թէ ռուսերէն, որպէսզի մօտ օրերս ուղարկեն Պետերբուրգ: Բաւական ընդարձակ գրութիւն է. Էական կէտերը սրանք են. պատմական մի տեսութիւն հայերի մատուցած ծառայութիւնների, բազմաթիւ ապացոյցներ հայերի հաւատարիմ հպատակութեան, յուրջ, փաստացի հերքում զանազան չարամիտ կասկածների, որ տարածել են ռուսական շովինիստ թերթերը, և մանրամասն հաշիւ Էջմիածնի եկեղեցական կալուածների ելքի ու մուտքի, թէեւ ամէն տարի կանոնաւոր հաշւետւութիւն է կատարւել և ներկայացւել կառավարչապետի դիւանին.

Խանութները փակելու համար Վաղարշապատում բանտարկւած են 35 հոգի.

Էջմիածին գնացող Յանձնաժողովը սեպտ. 7-8ին զբաղւած էր կալուածները ցուցագրելով. արդէն արձանագրութիւն է կազմւած 20-25 գիւղացիների ներկայութեամբ, որոնց և ստորագրել են տւել. Մօտաւոր բովանդակութիւնն այս է. «Այսօրւանից Վաղարշապատ գիւղը հայոց եկեղեցու իրաւասութիւնից դուրս գալով անցնում է երկրագործութեան և պետական կալուածների մինիստրութիւնների իրաւասութեան տակ. Բարձրագոյն հրամանը ճշտութեամբ պէտք է գործադրւի, ամէն մի շեղում խստիւ պատժւելու է: Այսուհետեւ եկեղեցական կալուածների գիւղի կապալառուները գործ պիտի ունենան պետական գանձարանի հետ»: Տեղացի ստոր հայերի վերաբերմամբ, որոնք ստորագրել են այդ արձանագրութիւնը, մեր ընկերները արդէն մի քանի թեթեւ պատիժներ են գործադրել.

——

ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ

Գանձակի արիւնոտ դէպքը ցնցեց ծայրէ ի ծայր ամբողջ կովկասեան Հայաստանը։ Ժողովրդական ցոյցերը ստացան սիստեմատիկ բնաւորութիւն։ Թիֆլիզը հոգեհանգիստ կատարելով Գանձակի նահատակուածների համար՝ տուեց ազդանշանը և նրա օրինակին հետեւեցին ուրիշ քաղաքներ ու գիւղեր։

Լոռիում—իւրաքանչիւր մի գիւղ—Ղարաքիլիսա, Ուզունլար, Զալալօղլի եւայլն—մին միւսի ետեւից կատարեցին նոյն առիթով հոգեհանգիստներ, որոնց ներկայ էր լինում հազարաւոր ժողովուրդ։

Ղարաքիլիսայում—ամէն կիրակի տեղի է ունենում ցոյց։ Խմբւում է ժողովուրդը, կատարում է հսկում, արտասանւում են ոգեւորիչ ճառեր եկեղեցու մէջ, երգւում են ազգային-յեղափոխական երգեր... Ոստիկանութիւնը լուռ հանդիսատես է լինում, չվստահանալով միջամտել։ Ցուցումը անսովոր է և կարելի է ըսպասել արիւնահեղ դիմադրութիւն ու ընդհարումներ։

Զալալօղլում—այդպիսի մի խաղաղ ցոյցի միջոցին, երբ եկւոր մի երիտասարդ սկսել է խօսել ամբոխի առաջ, ոստիկանութիւնը փորձել է ձերբակալել ճառախօսին, բայց ժողովուրդը բուռն յարձակումով յետ է մղել նրան։ Երիտասարդը՝ աւարտելուց յետոյ՝ հանգիստ շարունակել է իր ճանապարհորդութիւնը դէպի միւս գիւղերը...

Ղազախում—գաւառապետը, որ մի լաւ մարդ է, յարգւած տեղական հայ ազգաբնակութեան կողմից, կանչում է ժողովրդի ներկայացուցիչներին և առաջարկում խաղաղ կերպով յանձնել եկեղեցական գոյքերը։ Նրան պատասխանում են. «Աղա, դու գիտես, որ քեզ սիրում ենք. ինչ կուզես, կանենք քեզ համար, բայց այդ բանը չենք անի. մեռնել կայ, գոյքերը տալ չկայ...» Գաւառապետի դրութիւնը փափուկ է. չգիտէ՝ ինչ կը լինի։

Բաթումում — Սեպտեմբերի 8ին նոյնպէս կատարւել է հոգեհանգիստ Գանձակի սպանւածների համար. ներկայ են եղել մօտ 5,000 մարդ։ Ճառախօսներ եղել են և այն տեղ։ Կոզակները վրայ են հասել, երբ ժողովուրդը ցրւած է եղել պղտէն։

Ախալքալաքի — ամբողջ գաւառը արտայայտել է իր զայրոյթը և դիմադրելու պատրաստականութիւնը հետեւեալ եղանակով. Օգոստոսի 24ին բոլոր չրջակայ գիւղերից եկել է իւրաքանչիւրից 20-ական, 30-ական մարդ՝ գիւղացիների ստորագրած բողոքագրերը իրենց հետ առած։ Հաւաքւել է այդպիսով 7-8 հազար մարդ։ Եկեղեցու մէջ դեռ չաբաթ օրը կատարւել է հսկում։ Միւս օրը կիրակի, այդ ահագին բազմութիւնը լցրել է եկեղեցին ու բակը։

Մուրատեան եպիսկոպոսի հոգեհանգստից յետոյ՝ մի օրիորդ սկսում է խօսել վերջին կայսերական կարգադրութեան առթիւ, յորդորում է ժողովրդին՝ դիմադրել բռնակալութեան։ Ապա խօսում է մի երիտասարդ։ Բուռն ու յուզիչ ճարտասանութեամբ նա ցնցում է ժողովրդին և հազարաւոր ձայներ գոչում են նրա ետեւից. «Պարտա՛ստ ենք մեռնել և չը թողնել բռնանալ մեր իրաւունքների վրայ»։

Այնուհետեւ բազմութիւնը խոնըւում է եկեղեցու բակում բողոքագրի չուրջը։ Ստորագրում են նրանք, որոնք տակաւին չէին ստորագրել։ Հաւաքւում է մօտ 10 000 ստորագրութիւն։ Ընտրւում են երկու պատգամաւորներ՝ որ տանեն բողոքագիրը Էջմիածին։

Եղել են այդ չրջանում եւս յուզիչ միջադէպեր։ Ծեծւել է մի գիւղի տանուտէր, որ հրաժարւելիս է եղել ստորագրել բողոքագիրը։ Սաստիկ ծեծւել են միեւնոյն պատճառով, երկու գիւղական քահանաներ եւս. գիւղացիք առել են երանց ձեռքից եկեղեցու բանալիները, և դուրս քըշել իրենց չրջանից «Ձուք այլեւս քահանաներ չէք»—ասել են նրանց։

Սխալցխայում—ամբողջ հայաբնակութեան ներկայութեամբ բոլոր քահանաները պատարագ են արել, և ինչպէս լսում ենք, նզովք են կարդացել կառավարութեան հասցէին։ Ցուցմունքը սաստիկ է։ Սպասւում է մեծ ցոյց։

Սուխումի մօտ գտնւող Մեծաքարա գիւղը գնացին, կալուածները գրաւելու համար. գաւառապետը իր օգնականով, մի քանի ուրիշ պաշտօնեաներով և 15 կոզակներով։ Գիւղը ունի մօտ 150 տուն և մի քարաշէն եկեղեցի, որ առաջինն է Սուխումի չրջանում։ Տեղ հասնելով՝ գաւառապետը կանչել է տալիս քահանային ու երեցփոխանին և պահանջում է եկեղեցու բանալիները։

Քահանան յայտնում է, թէ ինք հոգեւոր իշխանութիւնից ոչ մի կարգադրութիւն չէ ստացել և հետեւապէս ոչինչ չէ կարող տալ։ Աւելացնում է, թէ եկեղեցու բանալիները գիւղացիները տարել են, լսելով որ կառավարութեան մարդիկ գալիս են առնելու։ Գաւառապետը դիմում է գիւղացիներին և սպառնալիքներով պահանջում բանալիները. գիւղացիք մերժում են. այն ժամանակ հրամայում է կացինով խորտակել եկեղեցու դուռը, ներս են մանում աւազակօրէն ու սկսում արձանագրել. աւարտելուց յետոյ բռնութեամբ պահանջում են գիւղացիներից՝ ստորագրել. բացի չորս մարդից ոչ ոք չի ստորագրում։

Գանձակի գաւառում ոստիկանապետը ման է գալիս գիւղերը, բացատրում է օրէնքը, կարդում է Գալիցինից գրած մի թուղթի՝ առանց վերնագրի և ստորագրութեան՝ տպւած ռուսերէն և հայերէն լեզուներով, ու առնչարկում է ոչ միայն յանձնել կայքերը, այլև ստորագրել մի շնորհակալական ուղերձ թագաւորին։ Ոչ մի տեղ ժողովուրդը չի համաձայնւել—«Մենք շատ ծառայութիւններ ենք արել ռուս թագաւորին, իսկ նա ցանկանում է խլել մեր կոպէկներով հաւաքւած եկեղեցական կայքերը—ինչպէ՞ս կը լինենք նրան շնորհակալ.» ահա նրանց պատասխանը։

Ղամարլու։—Երեւանի մօտ, սեպտ. 4ին, ոստիկանութիւնը հաւաքում է ժողովրդին և պահանջում է յանձնել կայքերը. նրանք չեն համաձայնում. պրիստաւը սկսում է ծեծել տանուտէրին, նա էլ ղայրանում, գցում է պրիստաւին ձիու տակ և սկսում է ծեծել ստրաժնիքներ վրայ են թափւում և ազատում պրիստաւին, որը ատրճանակով վիրաւորում է հակառակորդին. առաջ է գալիս ընդհարում. պրիստաւը ստրաժնիքներով մանում են մի տուն և սկսում են հրացանաձգութիւն. ժողովուրդն էլ դրսից պաշարում է տունը և արձակում ատրճանակներ ու հրացաններ, մինչեւ որ վրայ են հասնում ուրիշ շատ ստրաժնիքներ ու ազատում պաշարածներին. գիւղացիները արդէն պատրաստ են եղել վառել այդ տունը. գիւղացիներից սպաննւած է 4 հոգի, 20ի չափ վիրաւորւած են և մօտ 30 հոգի բանտարկւած։

Էջմիածնայ Գայր գիւղում (Լոռու գաւառ) հարիւրաւոր զինւած հայեր բռնել են գիւղի ճանապարհները և չինովնիքները չեն համարձակւում դնալ այնտեղ. պահանջել են զօրքեր Թիֆլիզից և Սլեքսանդրոպոլից։

Սգուլիսի գիւղացիները, երբ լսել են Ցանձնաժողովի դալու մասին, զինւած դուրս են եկել և բռնել գիւղի երկու ճանապարհները. Ցանձնաժողովը վախեցել ու յետ է դարձել։

Շուշում և Նուխում—գաւառապետները փորձեր են անում թուրքերին գրգռել հայերի դէմ. Շուշու գաւառապետը հաւաքել է թուրքերին և հետեւեալ ակնարկներն արել. «Լսել եմ, որ դուք զինւել էք և պատրաստւել մեզ պաշտպանելու ու հայերին կոտորելու. անչափ չնորհակալ ենք, բայց առայժմ մենք զօրքի ուժով էլ կարող ենք պաշտպանել.»

Դրան թուրքերը պատասխանել են. «Մենք ոչինչ չենք պատրաստում հայերի դէմ, նրանք մեր լաւ դրացիներն են.»

Նուխիում գաւառապետը հաւաքել է թուրքերին և հետեւեալ ճառն է խօսել. «Լսել եմ որ դուք հայերի հետ ընկերանալու միտք ունէք. հայերը ձեզ խաբում են, նրանք ձեր թշնամիներն են, նրանք Տաճկաստանում ջարդում են թուրքերին, դէմ են սուլթանին, դրա համար էլ ռուս կառավարութիւնը հիմա հալածում է նրանց»... Բայց թուրքերը լաւ են հասկացել, թէ բանը ինչումն է, որովհեաեւ նրանց մզկիթների կալուածները նոյնպէս գրաւել են յարքունիս 4-5-տարի սրանից առաջ.

ՏԷՌՈՐ

Եկեղեցական կալուածների յափշտակման առիթով Կովկասում կազմակերպւած Ի ՔՆԱՊԱՇՊԱՆՈՒԹԵԱՆ ԿՈՄԻՏԷԻ և նրա Մասնաճիւղերի որոշմամբ՝ տեղի են ունեցել մահուան պատիժի հետեւեալ դէպքերը.

Էջմիածնում սպաննւել է յափշտակիչ Ցանձնաժողովի արձանագրութիւնը ստորագրողներից՝ Սարգիս Փոթէեան. Ահա մանրամասնութիւնները.

Կիրակի, սեպտեմբերի 5ին, Վաղարշապատի հրապարակում, վանքի բուրջի մօտ, ահագին բազմութեան ներկայութեամբ, սեռորիստ Վարդան Պողոսեան, քշեցի, յարձակում է Փոթէեանի վրայ, վայր գլորում և դաշոյնի մի հարւածով մահացնում. ինքը՝ դաւաճան Սարգիսը վայր ընկած միջոցին, ատրճանակի երեք գնդակներով վիրաւորում է մեր ազնիւ Վարդանին, բայց վերքը մահացու չէ լինում։ Աղմուկի և իրարանցումի ձայնից վրայ են հասնում պրիստաւը. ստրաժնիկներ եւայլն. Վարդանը սկսում է փախչիլ դէպի Ղազարապատ տանող ճանապարհով. Զգալով որ ստրաժնիկները ծածանում են իրեն և կալանաւորումը անխուսափելի է, բոպէապէս վճռել է վերջ տալ և իր թանկագին կեանքին ու դաւաճանին սպաննող դաշոյնով մահացու վերք է հասցնում և իրեն. Ստրաժնիկները բռնում են բանտանելու, բայց ճանապարհին նա վախճանում է.

Վարդանի հերոսական մահը մեծ ցաւ ու կսկիծ պատճառեց բոլոր վաղարշապատցիներուն և մանաւանդ իր ընկերներին. Հ. Յ. Դաշնակցութիւնը, որի հաւատարիմ զինւորն էր այդ վեհանձն հոգին՝ կորցրեց մի անգնահատելի ուժ. Ժողովուրդը սակայն չափազանց գոհ է.

Ղուրդուղլի գիւղում սեպտ. 15ին տէռորիստները ատրճանակի չորս հարւած հասցրին քահանայ Տէր Գարեգինին, որը մատնութեան անհերքելի ապացոյց էր աւել. Վերքերը թէեւ չի մահացրել, բայց վտանգաւոր է.

Աշտարակում սեպտ. 13ին, մի անոյն տէռորիստների ձեռքով, սպաննել է մի թիւրք ստրաժնիկ.

Երեւանի ոստիկանատան աւագ գարագավօյի վրայ նոյնպէս փորձ եղաւ, բայց ապարդիւն — գնդակները վրիպեցին.

Կարսում՝ ԻՆՔՆապաշտպանութեան Կոմիտէի որոշմամբ՝ օր ցերեկով, գլխաւոր փողոցներից մէկում և ահագին ամբոխի ներկայութեամբ՝ ռէվոլվէրի մի քանի հարւածներով չանսատակ արւեց յայտնի թիւրք Շեբիֆ-բէյ որ ռուսաց ատ-պրօվոկատօրի դերն էր խաղում տեղական հայ հասարակութեան մէջ։ Տէռորիստը երկու սեղից վիրաւորել է նաեւ ոստիկանին, որ ուզել է նրան բռնել, ու ամայացել է.

Ախալքալաք գաւառի Կորխ գիւղի Տէր-Խաչատուր քահանան, որ դէմ լինելով մի ոսէ բողոք յայտնելու, ամօթաբար խլել էր գիւղացիների ձեռքից նրանց բողոքագիրը և տւել ոստիկանապետին, արդէն ստացել է իր արժանի պատիժը— մի առաւօտ նրան գտել են սպաննւած իր անկողնում.

Ալեքսանդրոպոլում դանակի հարւածներով վիրաւորւել է ոստիկան Ալեքսանդր Գարգիմանով.

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամէն տեղ բուն ժողովուրդը ցասման մէջ է. տարւած անսո-

վոր ոգեւորութեամբ։ Ալեքսանդրօպօլը, հայկական ցնցուած այդ կենտրոնը, ներկայացնում է ճշմարիտ հրաբուխ։ Յուզմունքը այնքան մեծ է, որ կառավարութիւնը չի վստահանում ուղարկել Ցանձնաժողովը՝ գոյքերը պահանջելու համար։ Գաւառապետը այն կարծիքն է յայտնել, որ պէտք է յետաձգել այդ գործողութիւնը։ Վտանգի առաջն առնելու համար՝ միջնորդներ են հրապարակ եկել երկու կողմից և բանակցութիւնների մէջ են։

Էջմիածինը խառնակ վիճակի մէջ է. Կաթողիկոսը մնում է անսասան։

Ներքին գործերի մինիստրը հեռագրել է Գալիցինին՝ «յետաձգել իրագործումը, եթէ դիմադրութիւնը մեծ է»։ Գալիցին պատասխանել է. «Բարձրագոյն հրամանը կիրագործեմ մի քանի շաբաթում»։

Երկու օր առաջ Երեւանից գնացել են պաշտօնեաներ, զօրքով, խլելու Էջմիածնի գանձարանը։ Կաթողիկոսը չի տուել բանալիքը և մեկներ է Գայիանէյի վանքը։ Կոտրել են գանձարանը, սենեակի դռները և փողը—հազիւ քսան հազար—բերել են Երեւան։ Վանքը պատած է զօրքով։ Երեկոյեան, երբ ծերունի Հայրապետը Գայիանէից գալիս է վեհարան, զինուորները նրան դիմաւորում են սուիններով։ Մի ժամ անցած՝ գալիս են Կաթողիկոսից ներողութիւն խնդրելու, ասելով թէ՝ զինուորները չեն ճանաչել։ Որպիսի՜ դառն րոպէներ հալածական Հայրապետի համար․․․

Արխատակէս եպիս. Սեդրակեան վերադարձաւ Սամարայից, ուր նրան և Սուքիաս եպիսկոպոսին կանչել էր Պլէվէն։ Մինիստրը սպառնալիքներ է կարդացել նրանց, իսկ Սուքիաս եպիսկոպոսին՝ Երեւանի ցոյցի առիթով, աքսորել է Օրէնբուրգ։

Կառավարութիւնը ստիպողաբար տեղեկութիւններ է տալիս Պետերբուրգ, փոքրացնելով կարելոյն չափ դիմադրութեան ոյժն ու չափը։

Պաշտօնապէս ոչ մի տեղ իսկապէս ոչինչ չի յանձնուած, բացի Հաշտարխանից, Բեսարաբիայից և Քութայիսից, որտեղի տէր Դաւիթ քահանան շատ անամօթաբար թոյլ է տուել հրովարտակը կարդալ ռուսերէն լեզուով եկեղեցում, իսկ երկու-երեք տեղացի երիտասարդների յանդիմանութիւններին էլ ասել է. «Գիտեմ, որ Կաթողիկոսը կոնդակ է ուղարկել, բայց նա հիմայ մեզ չէ կարող պաշտպանել, երբ կառավարութիւնը մեզ բանտը գցէ կամ աքսորէ»։

Թիֆլիսում Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը, վախենալով կառավարչապետի սպառնալիքներից, հրամանը ստանալուն պէս՝ գալիս է նշանակուած ժամին դպրոց և յանձնում դրամարկղը, բանալիները և գրքերը, հրաժարուելով, սակայն, ստորագրել, պրոտօկոլը։ Դրանց անունները—իբրեւ առաջին դաւաճանների — պիտի յանձնուեն պատմութեան։ Դրանք են՝ Իվան Ալիխանով, իշխան Արսէն Բէհբութեան, բժիշկ Կարապետ (Դերասիմ) Ստեփանեան, Յովսէփ Ղազ. Միգրանեան, Տիգրան վարդապետ և քահանայ Տերմարգեան։ Բամբայեց եկեղեցու երեցփոխ Վարդապետեանը նոյն ամօթալի քայլն է արել, յանձնելով դեռ մի օր առաջ, և այժմ եկեղեցու շինութիւնների նորոգումը աւարտելու համար՝ ամէն օր խոնարհաբար գանձարան է վազում և կառավարութիւնից փող վերցնում։

Հայրիկը շարունակում է իր բռնած արի ընթացքը։ Նամակ է գրել Թագաւորին ինքը, որտեղ ասում է, որ նա չի կարող դաւաճանել այն երդումին, որ տուել է օծուելու օրը — պաշտպանել Հայաստանեայց եկեղեցին և նրա ունեցած իրաւունքները։ Այդ նամակը նմանութիւն ունի Քրիստոսի Գեթսեմանեան այգիի աղօթքին։

Առաջ ենք բերում մի կտոր՝ Կովկասում կազմակերպուած «Հայկական Ինքնապաշտպանութեան Կենտրոնական Կոմիտէի» օգոստոսի 31ի պրոկլամասիօնից։

«... Թիֆլիսի դէպքը ոչ առաջինն էր և ոչ էլ վերջինն է լինելու։ Գազան Գալիցինը նորանոր դաւեր է սարքելու... Խոնարհութիւնն այլեւս արժէք չունի։ Որքան խոնարհուենք, այնքան մեծ է լինելու զոհերի թիւը։ Հարկաւոր է դիմադրութիւն, ուժեղ դիմադրութիւն։

«Սթափուեցէ՛ք, հայեր, բաւական է սորկի նման միշտ երկիւղով շարժել։ Թափուած արիւնը, ընկած զոհերը թո՛ղ վառեն ձեր արիութիւնը և մինչեւ վերջ պաշտպան կանգնեցնեն ձեր ազգային պատւի ու սեփականութեան։

«Եւ թո՛ղ այդ ինքնապաշտպանութիւնը աւելի անվախ, աւելի համարձակ արտայայտուի, միշտ բարձր կոչելով.

Կորչի՜ բռնակալութիւնը,

Կեցցէ՛ ժողովրդի Ազատութիւնը»։

«Դրօշակ»

ՎԱՌՆԱՅԻ ՀԱՅ ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ

Մի ժողովուրդ, որ դեռ նոր ոտք կը դնէ քաղաքակրթական շէմքի վրայ, հայէ, թուրքէ, յոյնէ, պուլկարէ բաղկացած այդ խառն ժողովուրդը, որ ադէտ ամբոխներու յատուկ հոգեբանութեամբ կը ծափահարէ գեղեցիկ փրազները, որքան ալ անոնք գէշ արտասանուած ըլլան, հոգի կուտայ տարօրինակ ձայներ ու անճոռնի դիմագծեր տեսնելու համար, մի այդպիսի ժողովուրդի առաջ բեմ դուրս եկող դերասանական խումբը անօթի չմնալու համար ստիպուած է անոր յարմարուիլ։ Թէպէտ այդ յարմարումի շարունակութիւնը արուեստի տեսակէտով դերասաններու բնածին ձիրքերը բացի չը զարգացնելէն փըչացնելու կը ծառայէ․ սակայն ապրելու տեսակէտով միակ ճամբան է, որ իրենց մուրացկանութենէն ու սովամահէն կ'ազատէ։ Քանի մը անգամ ներկայ ըլլալով իրենց խաղերուն միշտ մնկնած ենք այն տպաւորութեամբ․ որ մանաւանդ հայ դերասաններու մէջ կան շատ շնորհալիները, թէեւ վատ պայմաններու բերմամբ գեղարուեստական ոչ յանկալի բարձրութեան վրայ։ Օրինակ թողած Տիկին Փասուլաճեան պ. պ. Պապաեանն ու Երամեանը, որոնք արդէն փորձուած և կարող դերասաններ են միայն սըրտերնին է կոտրած․ պ. Հաճի Յակոբ Բէօլէեանը, որ շատ շնորհալի կոմիկ մըն է պէտք է աշխատի որքան կարելի է արուեստին մօտենալ և թողնել ամբոխի սիրած տափակութիւններն ու աւելորդութիւնները, որոնք թատրոնը ցիրքի կը վերածեն։ Օրիորդ Վեհանուշը կարող է պիտանի դերասանուհի դառնալ, եթէ յաջողի բեմի վրայ իրեն ազատ և գլուխը բարձր պահելու վարժեցնել, մանաւանդ ձայնին եւեւէջներ տալ, զոր այնքան անհրաժեշտ է հոգեբանական նըրբութիւնները բացատրելու համար։ Պ. Թէրզեանը զոր միօրինակ կը խաղայ, արտասանութիւնը մանաւանդ պիտի աշխատի ազատել հռետորական կապանքից։ Եւ պ. Թաշճեանը, որ նոր է և եռանդոտ, պիտի աշխատի իր եռանդը, ձեւերն ու արտասանութիւնը յարմարեցնել վայրկեաններուն։ Անշուշտ ատոնց մեծ մասը չէին ըլլար և ամենքին աւելի որոշ կարելի էր ցոյց տալ արհեստիպակասութիւնները եթէ խաղերը պիէսներ ըլլային յայտնի հեղինակներէ և յայտնի տանտաններով։ Կը լսեմ որ այս օրեր Սոֆիայէն գալու է տիկին Յակոբեանը և հայ դերասանները պիտի սկսին շարք մը լուրջ պիէսներ ներկայացնել, այն ատեն մենք իւրաքանչիւրի խաղի վրայ կարող կրնանք մանրամասն խօսիլ։ Բայց բան մը որ ամենէն շատ կը պակսի ու ամենէն տըխուրն է, այդ ալ հայ հասարակութեան անտարբերութիւնն է։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Կիրակի Նոյեմբեր 26ին պիտի կատարուի եկեղեցական կալուածներու գրաւման առթիւ ինկող Ռուսահայ Նահատակներու և 96 թուին կոտորածներու մէջ ինկած Տաճկահայ Նահատակներու յիշատակ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ԵՒ ՍԳԱՀԱՆԴԷՍ

Հոգեհանգիստը պիտի կատարուի տեղւոյս Ս. Սարգիս եկեղեցւոյն մէջ ժամը ճիշդ 9ին, որմէ յետոյ պիտի մեկնուի «Սալոնինենիյէ» սրահը, ուր պիտի կատարուի Սգահանդէսը։

Պիտի ատենախօսին Պ. Պ. Մարգպետունի և Խուշպուլեան։ Ատենախօսութիւնը ազատ է, բայց խօսիլ փափաքողները 3 օր առաջ պարտին լուր տալ յանձնախումբիս անդամներէն Պ. Պ. Մարգպետունիին և Ճանկիւլեանին։

Յանձնախումբս կը հրաւիրէ Վառնայի հայ երկսեռ հասարակութիւնը ներկայ գտնուիլ և պատուել Նահատակներու յիշատակը։

Յանձնախումբ

ՍԱԳՈՒՆԻԻ ՍՊԱՆՆՈՒՄԸ

Սագունիի սպանումը մեծ յուզում յառաջ բերաւ Եւրոպական մամուլին մէջ. Լօնտոնի «Թայմզ»էն մինչեւ Վիէննայի «Ցայթ»ը զբաղեցան անով և նուիրեցին զոհին անձին ու արժանիքին վերաբերեալ համակրալի յօդուածներ։

Մենք ստացած ենք անգլիական «Տէյլի Էքսփրէս»ի այս սպաննութեան մասին հաղորդած մանրամասն տեղեկութիւնները, որը պիտի հրատարակենք յաջորդ թիւով, ներկայ թիւը բացառապէս Կովկասեան շարժումներուն նուիրուած ըլլալուն համար։

Կը խնդրուի խմբագրութենէս՝ կը հրատարակել հետեւեալը.

«Հայաթերթ»ի նոր տարիներուն մէջ քանի մը կարեւոր պակասներ գըտնուելուն պատճառաւ ստիպուած ենք անոր հրատարակութիւնը ուշացնել մէկ երկու թիւի համար ալ։ Այս առթիւ մեր յարգելի ընթերցողներուն ներողութիւնը կը խնդրենք.

Խմբագիր «Հայաթերթ»ի
Տ. Ճգնաւորեան

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ
Печатница „Взаимность" Варна